Վերապատրաստող կազմակերպություն

ՀՀ ԿԳՄՍՆ <<Մարտունու Տ. Աբրահամյանի անվան ավագ դպրոց>> ՊՈԱԿ

Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստում

# ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**ԹԵՄԱ՝** Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը պատմություն առարկայի դասավանդման ընթացքում

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝ Վարդենիս

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Բեյբության Հասմիկ

ՈՒՍՈՒՑԻՉ՝ Բոխյան Մարինե

ԴՊՐՈՑ՝ << Վարդենիսի N2 հիմնական Դպրոց ՊՈԱԿ>>

Վարդենիս-2022

Բովանդակություն

**1.** Ներածություն..... **3 - 5**

**2.** Գրական ակնարկ..... **5 – 11**

**3.** Փորձարարական հետազոտություն..... **12**

**4**. Հետազոտվող խմբի նկարագիրը..... **13**

**4.1** Փորձարարական դաս**-1**..... **14**

**4.2** Փորձարարական դաս**-2**..... **15**

**5**. Վերլուծություն..... **16**

**6**.Օգտագործած գրականության ցանկ..... **17**

**7**.Հավելվածներ..... **18 -25**

## Ներածություն

Հայաստանի Հանրապետությունում իրականացվող պետական կրթական քաղաքականության շրջանակներում առաջնահերթ է դարձել կրթության որակի բարելավմանն ուղղված՝ հանրակրթության բովանդակությունը, ուսուցման բարձր արդյունքներ ապահովող պետական չափորոշիչը, միջնակարգ կրթության յուրաքանչյուր աստիճանի առարկայացանկը, դրանց դասարանային և լրացուցիչ պարապմունքների շաբաթական ժամաքանակները, առարկայական համալիր ծրագրերի ստեղծման սկզբունքները, կառուցվածքը, ուսուցման արդյունքների գնահատման և մշտադիտարկման համակարգը և

կրթական միջավայրի հիմնական պայմանները սահմանող մեկ միասնական շրջանակային փաստաթղթի՝ Ազգային կրթակարգի ընդունումը:

Ազգային կրթակարգը հանրակրթության բովանդակությունը սահմանող և դրա ներդրմանն ու իրականացմանը միտված նորմատիվ իրավական փաստաթուղթ է:

Ազգային կրթակարգը (այսուհետ՝ Կրթակարգ) ներկայացնում է տարրական, հիմնական և միջնակարգ հանրակրթական ընդհանուր ծրագրերի շրջանավարտներին ներկայացվող ընդհանրական որակական պահանջները, հանրակրթական հիմնական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը, սովորողների ուսումնական բեռնվածության ծավալը, գնահատման համակարգը, կրթական միջավայրին և ռեսուրսներին վերաբերող նոր պահանջները:

Միջնակարգ կրթության երրորդ աստիճանի՝ ավագ դպրոցի շրջանավարտի պատրաստվածությանը ներկայացվող ընդհանրական ծրագրային պահանջների կատարման արդյունքում ակնկալվում է, որ միջնակարգ (ավագ) դպրոցի շրջանավարտը պետք է ունենա ազգային և քաղաքացիական բարձր գիտակցություն, դրսևորի արժանապատիվ, հարգալից և մարդասիրական վարքագիծ ուսումնական գործունեության ընթացքում, ընտանիքում և իր առօրյա կյանքի մյուս ոլորտներում՝

ա. կարևորի իր ազգային ինքնությունը, գնահատի հայ ժողովրդի և հայոց պետության տեղն ու դերը համաշխարհային պատմության մեջ, պատրաստ լինի իր մասնակցությունը բերելու հայրենիքի հզորացման գործին,

բ. ունենա պատմական և արդի հասարակական երևույթները ինքնուրույն հետազոտելու, զարգացման նախագծեր կազմելու և ստեղծագործելու կարողություններ,

գ. հարգի մարդու հիմնարար իրավունքները և քաղաքացիական ազատությունները, լինի իրավագիտակ,

դ. ունենա ֆինանսական գրագիտություն, կարողանա կողմնորոշվել տնտեսական հարաբերություններում,

ե. պատասխանատվություն ցուցաբերի առօրյա կյանքում, լինի մարդասեր, հանդուրժողական և հարգալից վերաբերմունք ունենա շրջապատի նկատմամբ, լինի բարեկիրթ, զուսպ և քաղաքավարի,

զ. լինի ընտանեկան կյանքի արժեքների կրողը, գիտակցի ընտանիք կազմելու կարևորությունը, պատրաստ լինի ընտանեկան կյանքին,

է. կարողանա համագործակցել ինչպես տարեկիցների, այնպես էլ ծնողների, իրենից մեծերի ու փոքրերի հետ, հարգանք ունենա մեծահասակների հանդեպ, գնահատի և արժևորի նրանց վաստակը,

ը. մասնակցություն ունենա հանրային կյանքին, կատարի արդյունավետ թիմային աշխատանք, աշխատանքում լինի գործունյա և նախաձեռնող, ունակ լինի համագործակցելու համայնքի անդամների հետ,

թ. ազատ ու անկաշկանդ արտահայտի սեփական կարծիքը, ունենա ակտիվ, կառուցողական և հանդուրժող քաղաքացիական դիրքորոշում, իր գործունեությունը պլանավորելու հմտություն: Պատմության ուսուցիչը պետք է կարողանա իր առջև գլխավոր նպատակ դնել՝ ի՞նչ անել, որ աշակերտը սեփական փորձով հասկանա, թե ինչպես է ստեղծվում պատմական գիտելիքը, կարողանա քննարկել նյութի բովանդակությունը, նշի պատճառներն ու հետևանքները: Հասկանա՝ ինչպես է կարևորվում իրադարձությունը եւ ի՞նչ հարցեր են ծնվում պատմություն ուսումնասիրելիս:

Ուսուցիչը օրինակներ ներկայացնելու հետ մեկտեղ պետք է կարողանա արդյունավետ կառավարել ժամանակը, լինել համբերատար ու պատասխանել սովորողի բոլոր հարցերին, լսել ցանկացած մեկնաբանություն, հնարավորություն տա աշակերտին ձևավորել և արտահայտել իր կարծիքը:[1]

Պատմության ուսումնառության կարևոր վերջնարդյունքներից մեկն էլ ժամանակի զգացողությունն է, եւ սա էլ դառնում է բարդություններից մեկը, որ աշակերտը հաճախ չի ընկալում նյութը, ուստի պետք է օգնել աշակերտին անցյալին նայել այնպես, ինչպես անցյալի մարդիկ են նայել,այնուհետև վերլուծել և համեմատության մեջ գտնել ճշմարտությունը:

## Գրական ակնարկ

Մասնագիտական գրականության վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ յուրաքանչյուր հասարակություն, սոցիալական խումբ, հասարակական խմբավորում ստեղծում է իրեն հատուկ ընդհանուր և յուրահատուկ արժեքային համակարգեր և վարքականոններ, որոնք արտահայտում են նրանցում գերակայող հետաքրքրությունները և նպատակները: Այդ հասարակությանը պատկանող մարդը ընդունում է դրանք որպես իր վարքի չափանիշ: Անձնային արժեքը մարդու մասին գիտությունների՝ փիլիսոփայության, հոգեբանության, մանկավարժության, սոցիոլոգիայի և այլ գիտությունների կարևոր խնդիրներից մեկն է: Չնայած որ արժեքների հոգեբանական սահմանումների մեծամասնությունը հիմնվում են արժեքների և արժեքային կողմնորոշումների փիլիսոփայական և սոցիոլոգիական հայեցակարգերի

[1] Գիրք պատմության ուսուցման.Ինչու՞, Ինչպե՞ս /<<Պարադիգմա>> կրթական հիմնադրամ.-Եր.: 2020

վրա, անձնային արժեքների հոգեբանական հասկացումը էապես տարբերվում է այլ գիտություններում արժեքների մեկնաբանությունից:[2]

Պատմության դասի ընթացքում կարելի է ամբողջական պատկերացում ստանալ տվյալ ժամանակաշրջանի վերաբերյալ՝ ինչով են մարդիկ զբաղվել՝ նստակյաց կյանք էին վարում, թե՞ քոչվորներ էին, որո՞նք էին աշխատանքի հիմնական ուղղությունները:Պատմության դասավանդման նպատակն է՝ օգտագործելով պատկերային նյութ, մարդիկ պատմություն ասելով միայն չհասկանան՝ էսինչ թվին սա է եղել կամ էսինչ մարդը էսինչ բանն է խոսել: Այլ երկու աղբյուր վերցնել, նույն բանը կարդալ ու սկսել մեկնաբանել, հասկանալ՝ ո՞րն ավելի իրական կլինի: Եփե առկա է սեփական ռազմավարություն, ապա հնարավոր կլինի հասնել դրան:Արդի ժամանակաշրջանում շատ դժվար է հետաքրքրություն առաջացնել, կարծիքներ ձևավորել:

Մեր օրերում դպրոցներում հայ արժեքային համակարգի ձևավորումը Հայոց պատմության դասերին բախվել է լրջագույն խնդիրների և բարդությունների: Շատ բարդ և դժվար է դպրոցական առկա նյութի ուսուցմանման հենքի վրա ազգային արժեհամակարգի ձևավորում իրականացնել մեր օրերում: Ազգային արժեհամակարգի ձևավորման արդի մարտահրավերները լուծելու համար ուսուցչի դերակատարությունը մեծ է: Յուրաքանչյուր ուսուցիչ ինքը կարող է իր կազմակերպած դասի ընթացքում ունենալ ցանկալի արդյունք:

Անձնային արժեքների խնդիրը քննարկվել է տարբեր գիտակարգերի շրջանակներում և տրվել դրանց բազմաթիվ սահմանումներ: «Անձնային արժեք» հասկացությունը կիրառվում է տարբեր նշանակություններով: Սակայն միասնական կարծիք այս հասկացության սահմանման վերաբերյալ գոյություն չունի: Գրականության մեջ առանձնացնում են «արժեք» հասկացության առավել քան հարյուր սահմանումներ, որոնցում առաջարկվում են տվյալ խնդրի դիտարկման տարբեր մոտեցումներ և կողմեր: Մեր առջև նպատակ ենք դրել խմբավորել տարբեր տեսություններում անձի արժեքների վերաբերյալ ներկայացվող տեսակետները, ինչը հնարավորություն կտա բացահայտելու արժեքների ձևավորման հիմնական օրինաչափությունները:

Վերջին երկու տասնամյակում հայ իրականության մեջ արժեքների փոխակերպումները շարունակական բնույթ են կրում: Այս գործընթացը մեծապես պայմանավորված է տարբեր ուղղորդում ունեցող տեղեկատվական հոսքերով, տեղեկատվադաշտի առևտրայնացմամբ ուղեկցված իրողություններով, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմամբ, համաշխարհային տեղեկատվական միջավայրի ձևավորմամբ: Վերջիններիս գործունեության հիմնական տարածքն ու միջոցը ԶԼՄ-ներն են, և առաջին հերթին՝ էլեկտրոնային ԶԼՄ-ները (հատկապես նոր մեդիան և հեռուստատեսությունը): Ուստի

[2] Զեյնալյան Ն. Ա., Անձնային արժեք հասկացությունն անձի տեսություններում, Հանրային կառավարում, «Պետական ծառայություն» Երևան, 2017

վերջիններիս ուսումնասիրությունը և հանրային գիտակցության վրա դրանցից յուրաքանչյուրի ազդեցության չափաբաժնի ճշտումը թույլ կտա հստակեցնել հայ հասարակության գերակա արժեքների ձևավորման և փոխակերպումների ընթացքն ու ներքին շարժառիթները: Հանրային արժեքների հանդեպ ուշադրությունը հատկապես կարևոր է Հայաստանի նման հակամարտություններով մեջ ներքաշված, արտագաղթի մեծ տեմպեր ունեցող պետության համար: Համաշխարհայնացման գործընթացը մեծ ազդեցություն ունի հայի արժեհամակարգի ձևափոխումների վրա: Նորագույն տեխնոլոգիաների զարգացմամբ տեղեկատվությունը դարձել է խիստ շարժուն, ինչը նույնքան շարժուն է դարձրել մշակութային ներթափանցումները: Դրանք հիմնականում իրականացվում են համացանցի միջոցով տեղեկատվական տեխնոլոգիաների առաջատար Արևմուտքից, իսկ այս ամենի արտացոլումը պարզորոշ երևում է հեռուստաէկրանից. պետական այրերը և պարզապես քաղաքացիները ՀՀ կենսագործունեության ցանկացած բնագավառում իրենց քայլերի իրավացիությունն ապացուցելու համար ներկայացնում են դրանց առնչություններն ու զուգահեռները արևմտյան համապատասխան համակարգերի հետ, ինչը վերածվում է արևմտյան արժեքների գովազդի, ձևավորում կարծիք դրանց միանշանակ ճշմարտացի լինելու մասին, որոշակի անվստահություն առաջացնում սեփական արժեքների, ազգային ներուժի հանդեպ: Արժեքային այս փոխակերպումները, որոշ իմաստով, նպաստում են արտագաղթի ծավալների մեծացմանը: Անգլերեն լեզվի քարոզչությունը համացանցում, մասամբ նաև հեռուստաէկրանից փոխեց այս լեզվի հանդեպ արժեքային պատկերացումները, ինչը հանգեցրեց սոցիալական վարքի որոշակի դրսևորումների. մի կողմից՝ սկսեցինք համատարած անգլերեն սովորել, մյուս կողմից՝ ձևավորվեց անգլերենի անփոխարինելիության պատկերացում. այսօր ՀՀ պետական բուհեր տարեկան ավարտում են մոտավորապես 5 անգամ ավելի օտար լեզուների, քան հայոց լեզվի մասնագետներ: Դիմորդների թվի համեմատության դեպքում տարբերությունը վստահաբար շատ ավելի մեծ կլինի: Հայ–թուրքական և հայ–ադրբեջանական տեղեկատվական հարաբերությունները բնորոշվում են Թուրքիայի և Ադրբեջանի հարձակողական քաղաքականությամբ: Այս պետությունների հովանավորությամբ գործում են կառույցներ, որոնք միտված են հայության գերակա արժեքների նսեմացմանը. նրանք ջանք չեն խնայում վարկաբեկելու հայոց բանակը, մեզանում ձևավորելու անպաշտպանության, ՀՀ հանդեպ արհամարհանքի զգացողություն, լարվածություն առաջացնելու ներքաղաքական դաշտում: Այս նպատակներին մեծապես ծառայեցնելով նոր մեդիայի հնարավորությունները՝ ստեղծում են ռուսալեզու, անգամ հայալեզու կայքեր, ակտիվ գործունեություն ծավալում սոցիալական ցանցերում: Տեղեկատվադաշտի առևտրայնացումն, իր հերթին, թելադրեց արժեհամակարգի ձևավորման սեփական կանոնները: Մերօրյա ԶԼՄ–ները, ցավոք, դաստիարակչական գործառույթը համարում են ոչ շահութաբեր՝ առաջնային տեղ հատկացնելով ժամանցայինին: Այս ճանապարհին ետին պլան են մղվում ազգային, պետական, մշակութային, քաղաքակրթական արժեքները, ինչը դառնում է հանրության արժեհամակարգի ձևախեղման պատճառ: Մեդիասպառողը չի սիրում, երբ իրեն սովորեցնում են, և պարզունակ մատուցման դեպքում

արժեքներն իրոք չեն գտնի իրենց հասցեատերերին: Տվյալը: Փոխարենը, ժարգոնային խոսք և խաթարված արժեքներ ներկայացնող զվարճալի հաղորդումներն ու հեռուստասերիալները, սեռական, կրոնական և հոգեբանական շեղումներ քարոզող կայքերը, սոցիալական ցանցերում առկա հաճախ վտանգավոր ուղղորդումները, բռնություն գովազդող համակարգչային խաղերը գտնում են իրենց սպառողին: Եվ ամենից հաճախ այդ սպառողը դեռահասն է, ով չունի կայացած արժեհամակարգ, սոցիալական վարքի կարգավորման մեխանիզմներ, առավել հակված է ընդօրինակելու շրջապատին: Դեռահասության տարիքում (մասնագետների մեծամասնության կարծիքով՝ 12-16 տարեկան) է ձևավորվում մարդու աշխարհընկալման, աշխարհայացքի և, առհասարակ, առաջնային արժեքների համակարգը: Այս շրջանում անչափահասը սկսում է ակտիվորեն վերահմաստավորել իր նախկին մոտեցումները, փորձում է դուրս գալ ավագների ազդեցության ոլորտից, նրա համար ավելի կարևոր է դառնում շրջապատի կարծիքը, փորձում է հարմարվել նրանց կողմից ընդունելի նորմերին և հաստատվել տարեկիցների միջավայրում: Իսկ դեռահասը վաղվա արժեքների կրողն է, ուստի կարևոր է այսօր արդեն նրան ներարկել առողջ արժեքներ, ապագայի հասարակության համար պատրաստել հայրենասեր, քաղաքակիրթ քաղաքացիներ: Այս գործը մասամբ իրենց վրա պետք է վերցնեն ընտանիքը,դպրոցը և ՋԼՄ-ները : Մասնագետների պնդմամբ, հեռուստատեսությունը դեռահասի վրա ներազդման ուժով 3-րդ տեղում է ընտանիքից և դպրոցից հետո: Մինչդեռ հայաստանյան հեռուստա և ռադիո եթերներից հաճախ հնչող ոչ ճիշտ հայերենը, ցածրաճաշակ երաժշտությունը, բռնության տեսարաններ, խաթարված մտածելակերպ ու շարժուձև պարունակող հեռուստահաղորդումներն ու ֆիլմերը, սոցիալական կայքերում հակասոցիալական, հակապետական ու հակազգային արժեքներ քարոզող «ընկերները» յուրօրինակ բռնություն են դեռահասի արժեքների հանդեպ:[3]

Այս խնդիրների լուծումը առաջնային է հատկապես պատմության դասաժամերի միջոցով: Պատմության ուսուցիչները գրեթե ամեն դասին առնչվում են սովորողների արժեքներին և դիրքորոշման ձևավորմանը, և, կամա թե ակամա դառնում են այդ արժեքները ամրապնդող: Որպեսզի մենք ունենանք ճիշտ դիրքորոշում ունեցող և լավագույն արժեքներով օժտված սերունդ պետք է կիրառենք մի շարք մեթոդներ և հնարներ:

**1.**Ավագ դպրոցի ծրագրի «Հասարակություն, հասարակական գիտություններ»
ուսումնական բնագավառը նպատակաուղղված է՝

**1.1)** ազգային և համաշխարհային հիմնախնդիրների, մարդկության և սեփական ազգի պատմության և զարգացման վերաբերյալ համակարգված գիտելիքների տիրապետող,

---

[3] Անահիտ Մենեմշյան, Զարուհի Սարգսյան, Վարդուհի Ստեփանյան Հայ դեռահասի արժեհամակարգի փոխակերպումները էլեկտրոնային լրատվամիջոցների ազդեցությամբ (ուսումնաօժանդակ ձեռնարկ). – Եր.: ԵՊՀ հրատ., 2013թ.:

1.2) պետական մտածողություն և գործելակերպ ունեցող, այդ ոգով ապրելու և ստեղծագործելու կամք դրսևորող,

1.3) հայրենասեր և հայրենիքի պաշտպանությանը պատրաստ, անձնական, խմբային, ազգային և պետական շահերի ներդաշնակության անհրաժեշտությունը գիտակցող,

1.4) իր ժողովրդի հոգևոր ու նյութական արժեքները գնահատելու և պաշտպանելու պատրաստ,

1.5) ընտանիք կազմելու և ազգային ընտանեկան ավանդույթներին ու նորմերին հետևելու կարևորությունը գիտակցող,

1.6) ազգամիջյան և միջազգային հարաբերություններում փոխադարձ հարգանքի, հանդուրժողականության և բարիդրացիության անհրաժեշտությունը կարևորող,

1.7) «կրթություն ամբողջ կյանքի ընթացքում» ելակետային սկզբունքը կարևորող և դրան հետևող,

1.8) ազգային ու համամարդկային արժեքներ կրող մարդու, ժողովրդավարական արժեքներով առաջնորդվող իրավագիտակ քաղաքացու ձևավորմանը:

**2.** Ավագ դպրոցի ծրագիրը պետք է ներառի հիմնարար գիտելիքներ և պատկերացումներ՝

2.1) Հայաստանի և հայ ժողովրդի պատմության և ազգային հիմնախնդիրների,

2.2) հայկական քաղաքակրթության յուրահատկությունների ու ստեղծած արժեքների,

2.3) քաղաքակրթությունների զարգացման պատմական ընթացքի, պատմական տարբեր ժամանակաշրջանների և արդի դարաշրջանում մարդկանց ապրելակերպի, աշխարհընկալման, նպատակադրումների և գործունեության հիմնական տեսակների,

2.5) աշխարհի միասնականության և բազմազանության վերաբերյալ փիլիսոփայական դրույթի և արդի ժամանակաշրջանում դրա դրսևորման,

2.6) ժամանակակից աշխարհի քաղաքական կառուցվածքի, տնտեսական հիմնախնդիրների, Հայաստանի և տարածաշրջանի աշխարհաքաղաքական ու տնտեսական իրավիճակի,

2.7) ժողովրդավարության, մարդու իրավունքների, արդի համամոլորակային հիմնախնդիրների, միջազգային հարաբերությունների առանձնահատկությունների և Հայաստանի համար համաշխարհայնացման (գլոբալացում) հնարավոր հետևանքների,

2.8) ՀՀ Սահմանադրության, օրենքների, հանրային քաղաքականություն իրականացնող մարմինների, իր ժողովրդի և պետության կյանքը կարգավորող իրավական և բարոյական հիմնական նորմերի, ազգային ավանդույթների նշանակության մասին:

Դրանք սովորողներին կծանոթացնեն պատմական գիտելիքի կառուցման սկզբունքներին, կզարգացնեն պատճառահետևանքային կապեր, փոփոխություն և շարունակականություն դուրս բերելու,

պատմությունը էթիկական հարթության մեջ դիտարկելու, պատմական հեռանկար ձևավորելու և պատմական աղբյուրների հետ աշխատելու հմտություններ:[4]

Ուսումնառության արդյունքում սովորողները ուսուցչի օգնությամբ հաղթահարելով առկա բոլոր խնդիրները պետք է ձեռք բերի կայուն գիտելիքներ և կարողություններ:

Կարողունակությունները սովորողի կողմից ուսումնառության և դաստիարակության գործընթացում ձեռք բերված գիտելիքի, արժեքների, հմտությունների և դիրքորոշումների հիման վրա ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձևերն են: Կարողունակությունները ձևավորվում են սովորողի ուսումնառության ընթացքում ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի, սովորողի կողմից ուսումնական առարկաների ծրագրերի բովանդակության յուրացման, ինչպես նաև ուսուցման գործընթացում դաստիարակության միջոցով և բխում են հանրակրթության հիմնական նպատակներից:

Դիրքորոշման առաջացումը, ըստ Դմիտրի Ուզնաձեի պայմանավորված է այն հանգամանքով, որ տվյալ իրադրության մեջ օրգանիզմն ունի ակտիվ պահանջմունք և կան նրա բավարարման համար անհրաժեշտ օբյեկտիվ պայմաններ: Դիրքորոշումն ուղղվածություն է հաղորդում մարդու գործունեությանը և նախորդում է գիտակցական հոգեկան գործընթացներին: Այն հոգեկան երևույթ է և չի կարող հանգեցվել իր ֆիզիոլոգիական հիմքերին:

Դիրքորոշումը կարող է լինել կարճատև հոգեվիճակ (այս դեպքում նրա սուբյեկտիվ և մասամբ գիտակցական դրսևորումը ուշադրությունն է) կամ անձի կայուն առանձնահատկություն (սևեռված դիրքորոշում՝ ըստ Դ. Ուզնաձեի), որը մշտական ուղղվածություն է հաղորդում նրա ակտիվությանը:

## Փորձարարական հետազոտություն

Ի տարբերություն այն դասերի, որոնց այցելում են ստուգման կամ մանկավարժի աշխատանքում նոր փորձի տարբեր փնտրելու նպատակով՝ փորձարարական դասերը ուսուցիչներին առաջարկվում են նոր մեթոդիկա: Համապատասխանաբար, ուսումնական պրոցեսի մյուս կողմերը չեն դառնում ուսումնասիրման առարկա: Դիտարկվող դասը որոշակի է դարձնում նորի և պրակտիկայում լայն կիրառում գտած ուսուցման միջոցների համապատասխանելիությունը, նրանց գործառութային փոփոխությունները ներմուծվող նորի հետ համապատասխանեցված: Ուսումնասիրում է ներկայացվող նորույթի առաջընթացի հնարավորությունը ուսուցման ժամանակի և ուժի նվազագույն կորստի նպատակով, նրա

[4] Հանրակրթության պետական չափորոշիչ: Հավելված N2 ՀՀ Կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի N 439-Ն որոշման

արդյունավետությունը կայանում է սովորողների կարողությունների,հմտությունների և գիտելիքների համակարգի զարգացման վրա դրական ազդեցությամբ:

Փորձարարական դասի դիտարկմանը այցելած մանկավարժը պետք է պատասխանի հետևյալ հարցերին՝

- կարո՞ղ է արդյոք ներկայացվող նորույթը նա կիրառել իր փորձի ժամանակ,
- որո՞նք են նրա կիրառման սահմանները,
- հնարավո՞ր է արդյոք նրա կիրառումը հանգեցնի բացասական հետևանքների,
- ինչպիսի՞ տեղեկատվական լրացուցիչ աղբյուրներ պետք է ուսումնասիրել իր աշխատանքում կիրառելու համար և այլն:

Փորձարարական դասին այցելող մանկավարժը իր կոլեգայի փորձը ուսումնասիրում է իր փորձի տեսանկյունից, հետևաբար, ինքնաբերաբար նա միաժամանակ իր գործունեությունն է ենթարկում գնահատականի:

Դասի արդյունքում պետք է արտացոլվեն հետևյալ հարցերի պատասխանները՝

- հասե՞լ է նա դասի մեթոդական նպատակին,
- իրագործե՞լ է ուսումնադաստիարակչական գործընթացին վերաբերող խնդիրները:

## Հետազոտվող խմբի նկարագիրը

Որպես հետազոտման խնդրահարույց թեմա ընտրվել է 8 – րդ/գ/ դասարանի մի քանի աշակերտների առաջադիմության, պասիվության հետ կապված հարցերը: Այդ դասարանում սովորում են 15 աշակերտ՝6 աղջիկ, 9 տղա: Տղաները բավականին ակտիվ են ՝աշխույժ: Աշակերտներից շատերը կարողանում են պատմել, պատասխանել հարցերին, որոշ չափով վերլուծել, սակայն մյուս մի քանի աշակերտներ պասիվ են, մասամբ են մասնակցում դասերին,աշխույժ չեն, չեն կարողանում վերլուծել: Սովորողների մեծ մասը կարողանում է դասը պատմել,պատասխանել հարցերին, մյուս մասը կատարում է աշխատանքներ, սակայն հայոց պատմության դասը առանց կարծիքներ արտահայտելու,առանց իրենց դիրքորոշումը պարզաբանելու, հետաքրքիր և արդյունավետ կազմակերպել չի լինի: Ուսումնասիրվող դասարանում Հայոց պատմություն առարկան դասավանդվում է շաբաթական երկու ժամ ժամանակով: Հայոց պատմություն առարկան ուսումնասիրում են երեքշաբթի և ուրբաթ օրերին, ինչը հնարավորություն է տալիս սովորողներին պատրաստվել, մտորել և հասնել եզրահանգումների: լավագույն դեպքում սովորողները պետք է պատմության դասի ընթացքում հասկանան, թե ի՞նչ է տեղեկատվությունը, ինչպե՞ս է տեղեկատվության աղբյուրը վերածվում պատմական աղբյուրի՝ պատմական հարցադրումների

համատեքստում: Անհրաժեշտ եմ համարում բոլոր սովորողների ներգրավվածությունը դասապրոցեսին: Իրավիճակը ցույց է տալիս, որ այն հետազոտման կարիք ունի և եթե ցուցաբերվի ճիշտ և նպատակային մոտեցում, ապա հնարավոր կլինի կարճ ժամանակահատվածում հասնել էական առաջընթացի: Երեխաներից յուրաքանչյուրի խնդիրը անհատական է, ուստի նպատակահարմար է, որ դիտարկվեն որպես առանձին դեպքեր: Սովորողների մոտ կզարգացնենք ընկալումները,եթե դասապրոցեսը կազմակերպենք ճիշտ, կիրառելով անհրաժեշտ մեթոդներ և հնարավորինս <<բաց>> առաջադրանքներ և հարցեր:

## Փորձարարական դաս 1

Դասի հենց սկզբից սովորողների համար պետք է պարզ լինի թե ի՞նչ նոր բան են սովորելու տվյալ դասաժամին, ի՞նչ նոր բան են կարողանալու անել և իմանալ դասի վերջում: Դասի վերջնարդյունքը կլինի բավարարված, հագեցած գիտելիքներով և կարողություններով: Կբարձրանա սովորողների ինքնավստահությունը, նաև ձեռք բերված հմտությունները համադրելու լուրջ կարողություն ձեռք կբերեն: Առաջինը ընտրվել է այն դասը, որը ձևակերպվում է որպես նոր նյութի ուսումնասիրություն: Աշակերտներին նախապես հանձնարարվել է ծանոթանալ նոր ուսումնասիրվելիք թեմայի հետ, շեշտը դնելով ծագումնաբանության վրա: Աշակերտը պետք է իմանա Արևելյան Հայաստանի վարչական բաժանումները,կառավարման համակարգը, սոցիալ-տնտեսական իրավիճակը: Վերլուծի 1804_1813թթ. ռուս-պարսկական պատերազմի պատճառները: Արժևորի հայերի մասնակցությունը պատերազմի հաղթական ավարտին:

Աշխատանքի նկարագրություն համար նպատակահարմար է ներկայացնել դասը՝ (պլանը հավելվածում), դրա ընթացքը, պրոբլեմային հարցերը և լուծման հնարավորություններն ու ուղիները: Մինչև դասը սկսելը ձևակերպվում է դասի առանցքային, հարցերը: Կարևոր է, որ հարցերը բարդ չլինեն, որպեսզի աշակերտները կարողանան դրանք լուծել և խոչընդոտներից չհուսահատվեն: Առաջին դասի թեման էր՝ Արևելյան Հայաստանը 19-րդ դարի կեսին :

Դասը կառուցվելու է ,,Պատմական հեռանկար,, սկզբունքի շուրջ: Այն սովորողներին կօգնի հասկանան՝ << անցյալը անծանոթ երկիր է>>, ուր մարդկանց համոզմունքներն ու դավանած արժեքները հաճախ շատ տարբեր են ներկայիս արժեքներից և համոզմունքներից: Այն կօգնի աշակերտներին հասկանալ հին դարերում ապրած և հզոր պետականություն կերտած հայի ոգին,կվերականգնեն պատկերացումները

մարդկանց վարքը հասկանալու համար:

Պատմական հեռանկար զարգացնելու արդյունավետ միջոց են այն ուսումնական ռազմավարությունները , որոնք սովորողին թույլ կտան բացատրել և համադրել իրադարձությունները: Դասը արդյունավետ էր, հետաքրքիր, բոլորը մասնակցում էին, նույնիսկ ներգրավվեցին այն աշակերտները, որոնք չէին կարողանում պատմել, նրանք տարբեր հատվածներից կարդացին և կատարեցին մեջբերումներ:

Ամփոփելով առաջին հետազոտական դասը կարելի է ճշել, որ այն հաջողված էր, թիրախային խմբի աշակերտները կարողացան որոշ չափով վերլուծել խորքային հարցերը դրանց հանգուցալուծումը գտնել: Աշակերտները կարողացան արտահայտել իրենց դիրքորոշումը թեմայի շուրջ: Դասը հետաքրքիր էր,ժամանակի առումով կային որոշակի սահմանափակումներ: Աշակերտները ոգևորված արտահայտվում էին, համեմատում և վերլուծում: Հայրենասիրական ոգին բարձր էր, բոլորը ցնցարկում էին ազգային գաղափարներ:

## Փորձարարական դաս 2

Երկրորդ դասի թեման հետևյալն էր << Արևմտյան Հայաստանը 19-րդ դարի կեսին >>: Դասի տիպ՝ Սոկրատեսյան ցնցարկում և նոր նյութի հաղորդումն՝կարևոր հարցերի ցնցարկումով: Աշխատանքի նկարագրություն համար նպատակահարմար է ներկայացնել դասը՝ (պլանը հավելվածում), դրա ընթացքը, պրոբլեմային հարցերը և լուծման հնարավորություններն ու ուղիները: Սկզբում երեխաները վերհիշում են նախորդ դասի առանցքային խնդիրները:
Այսօրվա դասի նպատակն է՝ համեմատելով Հայաստանի երկու հատվածների սոցիալ-տնտեսական քաղաքական իրավիճակը ցույց տա Արևմտյան Հայաստանի գլխավոր խնդիրները: Ցույց տա Ռուսաստանի և Թուրքիայի քաղաքականությունը Այսրկովկասում,որից մեծապես տուժում էր արևմտահայությունը

Դասի սկզբում առաջանում են հարցեր՝ ի՞նչ նոր բան են սովորելու տվյալ դասաժամին, ի՞նչ նոր բան են կարողանալու անել և իմանալ դասի վերջում:Դասի վերջնարդյունքը կլինի բավարարված, հագեցած գիտելիքներով և կարողություններով:Կբարձրանա սովորողների ինքնավստահությունը, նաև ձեռք բերված հմտությունները համադրելու լուրջ կարողություն ձեռք կբերեն:
Մանրամասն ուսումնասիրելով և հետազոտելով հարցադրումների մեթոդը տեսա,որ այն շատ արդիական է:Այն նպաստեց թիրախային խմբում գտնվող աշակերտների ակտիվացմանը: Նրանց բոլորի մոտ ստացվեց դրական տեղաշարժ:

# Վերլուծություն

Հետազոտական աշխատանքը շատ հետաքրքիր ընթացք ունեցավ, աշակերտների մտքերը, գաղափարները երևացին յուրովի: Այսպիսի դասերը պետք են, սրանք նաև հուշում են ուսուցչին, թե որտեղ են թերանում աշակերտները: Դասերը շատ բովանդակալից էին,այն աշակերտները, որոնք պասիվ էին հիմնականում, կարողացան մասնակցել դասերին լիարժեք, նրանք ազատ արտահայտում էին իրենց դիրքորոշումը, կարծիքը: Կան աշակերտներ, որոնց ունակությունները մինչև վերջ էլ չեն բացահայտվում և զանազան մեթոդների կիրառումը ցույց է տալիս դրանց արդյունավետության աստիճանը: Դասարանում ունեցանք որոշակի առաջընթաց:
Ուսումնական ռազմավարությունները օգտագործվեցին արդյունավետ, միահյուսվելով ազգային արժեհամակարգին, ստացանք մտածող, տրամաբանող, վերլուծող և կարծիք արտահայտող աշակերտ, որը պատրաստ կլինի ապագայում նույնպես հստակ արտահայտվելու և իր դիրքորոշումը հայտնելու:

21- րդ դարի աշակերտը սեփական փորձով պետք է հասկանա, թե ինչպես է ստեղծվում պատմական գիտելիքը, կարողանա քննարկել նյութի բովանդակությունը, նշել պատճառներն ու հետեւանքները: Հասկանա՝ ինչպես է կարեւորվում իրադարձությունը եւ ինչ հարցեր են ծնվում պատմություն ուսումնասիրելիս:

# Օգտագործած գրականության ցանկ

**1**. Գիրք պատմության ուսուցման.Ինչու՞, Ինչպե՞ս /<<Պարադիգմա>> կրթական հիմնադրամ.-Եր.: 2020

**2**. Զեյնալյան Ն. Ա., Անձնային արժեք հասկացությունն անձի տեսություններում, Հանրային կառավարում, «Պետական ծառայություն» Երևան, 2/2017:

**3**. Անահիտ Մենեմշյան, Զարուհի Սարգսյան, Վարդուհի Ստեփանյան Հայ դեռահասի արժեհամակարգի փոխակերպումները էլեկտրոնային լրատվամիջոցների ազդեցությամբ (ուսումնաօժանդակ ձեռնարկ). – Եր.: ԵՊՀ հրատ., 2013թ.:

**4**.Հանրակրթության պետական չափորոշիչ: Հավելված N2 ՀՀ Կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի N 439-Ն որոշման:

5. https://hy.wikipedia.org/wiki/ Դիրքորոշում

---

## Հավելվածներ

## ԴԱՍԻ ՊԼԱՆ **1**

ԴԱՍԻ ԹԵՄԱՆ՝ Արևելյան Հայաստանը 19-րդ դարի կեսին

ԱՌԱՐԿԱՆ՝ Հայոց պատմություն

ԴԱՍԱՐԱՆ՝ 8-րդ

ԴԱՍԻ ՏԻՊԸ՝ Խառը համակցված, նոր նյութի հաղորդում

ՄԵԹՈԴՆԵՐ և ՀՆԱՐՆԵՐ ՝ Հարցադրման մեթոդ,Т-ածև աղյուսակ ,

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՐԱԳԱՆԵՐ՝ դասագիրք,քարտեզ,գրատախտակ

ԴԱՍԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 45ր.

| | |
|---|---|
| ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ | ա)1. ակադեմիական՝աշակերտները պետք է իմանան արևելյան Հայաստանի վարչաքաղաքական իրավիճակը<br><br>2.Այսրկովկասում հայաբնակ բկրամասերը 3.Անդրկովկասում<br><br>Ռուսաստանի նպատակները<br><br>բ) սոցիալական՝Կարողանա ներկայացնել ռուսաստանի հավակնությունները Անդրկովկասում<br><br>.Բացատրի ռուսական զորքերի Երևանյան 1 և 2 արշավանքները և դրանց հետևանքները<br><br>.Ներկայացնի հայերի մասնակցությունը 1804-1813թթ ռուս-պարսկական պատերազմին :<br><br>.Վերլուծի Գյուլիստանի հաշտության պայմանագիրը |

| | |
|---|---|
| ԴԱՍԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ | Ցույց տալ քաղաքական իրավիճակը Այսրկովկասում.<br><br>.Ռուս-պարսկական պատերազմներԸ<br><br>. հայերի ակնկալիքները Ռուսաստանից |
| ԴԱՍԻ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ | Աշակերտը պետք է իմանա Արևելյան Հայաստանի վարչական բաժանումները,կառավարման համակարգը,սոցիալ-տնտեսական իրավիճակը:<br><br>Վերլուծի1804_1813թթ.ռուս-պարսկական պատերազմի պատճառները Արժևորի<br><br>հայերի մասնակցությունը պատերազմի հաղթական ավարտին<br><br>Գնահատի Գյուլիստանի հաշտության պայմանագիրը: |

| | Դասի ընթացքը |
|---|---|
| Կազմակերպական մաս<br><br>3 րոպե | -աշակերտների բացակայության հաշվառում- դասարանի ավագը ներկայացնում է բացակա աշակերտներին<br><br>-դասի նպատակների ներկայացում – ուսուցիչը ներկայացնում է դասի նպատակներն ու խնդիրները |

| | |
|---|---|
| Խթանում<br><br>10 րոպե | Հարց – պատասխան:<br><br>1) Թվարկել Արևելյան Հայաստանի խանությունները,իմանա կառավարման ձևը<br><br>2) Ներկայացնել այս ժամանակի նշանավոր իշխանական տոհմերին ''մելիք Աղամալյաններ,Դավիթ և Դանիել եպիսկոպոսներին<br><br>3) Արևելյան Հայաստանի Որ տարածքները անցան Ռուսաստանին 1813թ.հոկտեմբերի 12-ին |
| Իմաստի ընկալում<br>Կշռադատում<br><br>15 րոպե | ԻՆչու սկսվեց ռուս-պարսկական պատերազմը;<br><br>Ինչ դերակատարում ունեցան հայերը պատերազմում<br><br>Ինչ արդյունքներ և հետևանքներ ունեցավ ռուս-պարսկական պատերազմը հայերի համար: |
| Նոր դասի հաղորդում<br><br>15 րոպե | -Ներկայացնել Արևմտյան Հայաստանի վարչաքաղաքական իրավիճակը 19-րդ դ. սկզբին<br><br>Ազգային և կրոնական հալածանքները<br><br>-1806-1812թթ. ռու-թուրքական պատերազմը և հայերը<br><br>- |
| Գնահատում և տնային<br><br>աշխատանքի<br>հանձնարարում<br><br>2 րոպե | 4 աշակերտ 8, 2 աշակերտ 6 |

| | |
|---|---|
| | Համեմատել Արևելյան և Արևմտյան Հայաստանը գտնել ընդհանրություններն ու տարբերությունները |

# ԴԱՍԻ ՊԼԱՆ 2

ԴԱՍԻ ԹԵՄԱՆ՝ Արևմտյան Հայաստանը 19-րդ դարի սկզբին

ԱՌԱՐԿԱՆ՝ Հայոց պատմություն

ԴԱՍԱՐԱՆ՝ 8-րդ

ԴԱՍԻ ՏԻՊԸ՝ Սոկրատեսյան ֆենարկում, նոր նյութի հաղորդում

ՄԵԹՈԴՆԵՐ և ՀՆԱՐՆԵՐ ՝ Մտագրոհ,Հարցադրումների մեթոդ,բանավեճ,

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՐԱԳԱՆԵՐ՝ դասագիրք,քարտեզ,գրատախտակ վենի դիագրամ

ԴԱՍԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 45ր

| | |
|---|---|
| ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ | ա) ակադեմիական՝աշակերտները պետք է իմանան արևմտյան Հայաստանի վարչաքաղաքական իրավիճակը<br>2.Հայաշատ նահանգները՝՝առանձնացնել էրզրումը<br>3.Ինչպես ովքեր էին կեսկեսները<br>4.Ինչպես որքան հայ էր ապրում Օսմանյան թուրքիայի տարածքում<br>բ) սոցիալական՝կարողանա ներբայացնել Արևմտյան Հայաստանի հայաբնակ նահանգները ըստ իրենց կարևորության<br>.Վերևանի ազգային և կրոնական հալածանքների պատճառները<br>.Գնահատի հայկական կիսատանկախ իշխանությունների դերը<br>.Արժևորի 1806-1812թթ.ռուս-թուրքական պատերազմին հայերի մասնակցությունը .Մեկնաբանի Բուխարեստի պայմանագրի կետերը |

| | |
|---|---|
| ԴԱՍԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ | Համեմատելով հայաստանի երկու հատվածների սոցիալ-տնտեսական քաղաքական իրավիճակը ցույց տա Արևմտյան Հայաստանի գլխավոր խնդիրները:<br><br>Ցույց տալ Ռուսաստանի և Թուրքիայի քաղաքականությունը Այսրկովկասում,որից մեծապես տուժում էր արևմտահայությունը |
| ԴԱՍԻ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ | Իմանա 1806-1812 թթ ռուս-թուրքական պատերազմի պատճառը, սկիզբը, ավարտը:Ներկայացնի հայերի մասնակցությունը ռուս թուրքական պատերազմին: |
| Դասը իրականացվում է ԽԻԿ համակարգով | |
| Կազմակերպական մաս<br><br>3 րոպե | Դասի ընթացքը<br><br>-աշակերտների բացակայության հաշվառում- դասարանի ավագը ներկայացնում է բացակա աշակերտներին<br><br>-դասի նպատակների ներկայացում – ուսուցիչը ներկայացնում է դասի նպատակներն ու խնդիրները |

| | |
|---|---|
| Խթանում<br><br>10 րոպե | Հարց – պատասխան:<br><br>1) Ներկայացրեք Արևմտյան Հայաստանի վարչաժողովրդագրական պատկերը 19-րդ դ. սկզբին<br><br>2) Ինչ իրավիճակում էին թուրքահպատակ քրիստոնյաները 19-րդ դ սկզբին՝՝ազգային կրոնական հալածանքներ<br><br>3)Ներկայացրեք ռու-թուրքական պատերազմի սկիզբն ու ընթացքը և հետևանքները |
| Իմաստի ընկալում | Որն էր թուրքերի հայահալաշ քաղաքականության պատճառները |

| | |
|---|---|
| Կշռադատում<br><br>15 րոպե | Ինչու էին հայերը հակված դեպի ռուսները<br><br>Կար արդյոք և ռուսներից և թուրքից խուսափելու ճանապարհ |
| Նոր դասի հաղորդում<br><br>15 րոպե | -Սահիկաշարի կիրառություն<br><br>-Ամփոփելով նախորդ 2 դասերը ներկայացնել Ռուսաստանի նոր քաղաքականությունը՝՝Հայաստանը որպես գաղութ Ռուսաստանի կազմում ընդգրկելու քաղաքականությունը:<br><br>- |
| Գնահատում և տնային աշխատանքի հանձնարարում<br><br>2 րոպե | 2 աշակերտ ստացան 8 և 3աշակերտ 7 |
| Գնահատում և տնային աշխատանքի հանձնարարում<br><br>2 րոպե | Ցույց տալ ռուս –պարսկական և ռուս-թուրքական պատերազմների արդյունքում հայկական տարածքներ գաղութացման փուլերը |

| | |
|---|---|
| | |